ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(1880-ական թթ. առաջին կես)

Մեծ Բրիտանիան իր գավթողական քաղաքականության պլանները իրագործելիս առանձնահատուկ ուշադրություն է հատկացրել միսիոներական ընկերությունների գործունեությանը։ Բրիտանիայի կառավարող շրջանները միսիոներներին համարում էին իրենց քաղաքականության գաղափարների և մշակույթի տարածողները[1]։ Միսիոներներին օգտագործելը հնարավորություն էր տալիս թափանցել աշխարհի տարբեր անկյուններ, ստեղծել ազդեցության նորանոր շրջաններ՝ ամրապնդելով Բրիտանիայի դիրքերը գաղութներում[2]։

Դեռևս XVIII դարի վերջին և XIX դարի սկզբներին Անգլիայում հիմնվեցին բազմաթիվ միսիոներական ընկերություններ։ Դրանցից առաջինը 1804 թ. Լոնդոնում ստեղծված Բրիտանական աստվածաշնչային ընկերությունն էր, որն իր գործունեությունը սկսեց ծավալել Մերձավոր Արևելքում՝ այնտեղ ուղարկելով շրջիկ գրավաճառներ՝ տեղի բնակչության մեջ «Սուրբ գիրքը» տարածելու նպատակով։ Այս ընկերությունից բացի XIX դարի սկզբներին ստեղծված անգլիկանական եկեղեցու միսիոներական ընկերությունը Օսմանյան կայսրություն էր ուղարկում իր միսիոներներին, որոնք զբաղված էին ոչ միայն խաղաղ քարոզներով, այլև ակտիվորեն միջամտում էին Թուրքիայի ներքին գործերին[3]։ Միևնույն ժամանակ բողոքական հասարակությունները (համայնքները—Ա. Ս.) Թուրքիո մեջ կկառավարվին հատուկ ներքին կանոնադրություններով, որոնք օսմանյան կառավարությունն պաշտոնապես հաստատված չեն[4]։ Օտարերկրյա դեսպանների, հատկապես Կ. Պոլսի անգլիական դեսպանի պահանջով սուլթանը որոշակի արտոնություններ էր շնորհում բողոքական միսիոներներին իր կայսրության տարածքում ազատ գործելու համար[5]։ Դա հնարավորություն էր տալիս միսիոներներին Արևմտյան Հայաստանը դարձնել իրենց գործունեության ասպարեզ։ Արդեն 1878 թ. Հռոմի Լևոն XIII պապը, հայերի միջավայրում կաթոլիկության տարածումը ավելի ուժեղացնելու համար, Վատիկանում հիմնում է հայկական հանձնաժողով։ Կաթոլիկ միսիոներները համոզում էին հայերին, որ հարելով կաթոլիկությանը նրանք ավելի ապահով վիճակում կլինեն Թուրքիայում, կօգտվեն քաղաքական արտոնություններից[6]։ Ֆրանսիան, որը կաթոլիկ միսիոներների ամենաղորեղ պաշտպանն էր, ճնշում գործադրեց սուլթանի վրա՝ պահանջելով կաթոլիկ համայնքների ազատ գոյությունը Թուրքիայում։ 1831 թ. սուլթանը հայ կաթոլիկ համայնքներին ինքնուրույն գոյության իրավունք է տալիս[7]։ Կաթոլիկությունը տարածվում է նաև առաջահայու-

---

[1] Мустафа ал Халиди, Омар Фарух. Миссионеры и империализм в арабских странах. М., 1961, с. 41, 89.

[2] Х. Ф. Б. Линч. Армения. Путевые очерки и этюды. Т. II. Тифлис, 1910, с. 556—590; *Ե. Գարիկյան. Հայկական հարցը Արևելյան հարցի մեջ (1860—1880). Պեյրութ, 1962, էջ 151, 211—212։*

[3] Мустафа ал Халиди, Омар Фарух. Указ. соч., с. 101.

[4] *Մաղաքիա արք. Օրմանյան. Հայոց եկեղեցին և իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը և ներկա կացությունը. Կ. Պոլիս, 1911, էջ 237։*

[5] Мустафа ал Халиди, Омар Фарух. Указ соч., с. 90, 98, 99. *Ա. Ալպայաճյան. Պատմություն Եվդոկիո հայոց. Գահիրե, 1952, էջ 833։*

[6] *Մ. Օրմանյան. Ազգապատում. մասն երրորդ, Երուսաղեմ, 1927, էջ 4612։*

[7] ЦГИА СССР в Ленинграде (*այսուհետև՝* ЦГИАЛ СССР), ф. 821, оп. 125, д. 150-1, л. 84—102; *Մ. Օրմանյան. Հայոց եկեղեցին..., էջ 116—118։*

թյան և պարսկահայության մեջ։ Լենինգրադի պետական կենտրոնական արխիվում պահվում են մի շարք փաստաթղթեր, որոնք ուշագրավ են Մեծ Բրիտանիայի արտաքին զավթողական քաղաքականության մեջ միսիոներների դերի լուսաբանման տեսակետից[8]։

Ինչպես հայտնի է, անգլիական միսիոներների գործունեությունը հայերի շրջանում հատկապես ակտիվացավ 1878—1880-ական թթ.։ Դա բացատրվում էր այն հանգամանքով, որ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո արևմտահայերի ռուսական կողմնորոշումը ավելի էր խորացել։ Անգլիական տիրող շրջանները անհանգստանում էին, որ Ռուսաստանը աստիճանաբար կարող էր ամրապնդվել Արևմտյան Հայաստանում՝ իր ազդեցության տակ պահելով «անգլո-հայկական» առևտրական ուղին, որը Մեծ Բրիտանիայի առևտրական կենտրոնները կապում էր Պարսկաստանի ու Կենտրոնական Ասիայի մյուս երկրների հետ[9]։

Բացի այդ, նրանց թվում էր, որ Ռուսաստանը, ամրապնդելով իր դիրքերը Հայկական լեռնաշխարհում, անմիջականորեն կսպառնար Հնդկաստանի անվտանգությանը, քանի որ կբարձրանար Ռուսաստանի ռազմական և քաղաքական ազդեցությունը Պարսից ծոցի շրջանում։

Սակայն Ռուսաստանը 1880-ական թթ. սկզբներին իր արտաքին քաղաքականության ծանրակետը տեղափոխում է Միջին Ասիա։ Այս ամենը անհանգստացնում է բրիտանական գաղութարարներին, որոնք Հնդկաստանը թվացող վտանգից ապահովելու համար ավելի են ակտիվացնում քաղաքական ճնշումը Թուրքիայի վրա՝ օգտագործելով հայկական բարենորոգումների խնդիրը[10]։ Դրանով իսկ Մեծ Բրիտանիան փորձում էր սրել ռուս-թուրքական հարաբերությունները, շիկացնելով միջազգային դրությունը աշխարհի այդ շրջանում[11], ամեն կերպ աշխատելով ներքաշել Ռուսաստանը Հայկական հարցի լուծման լաբիրինթոսը, փրկելով Հնդկաստանը Միջին Ասիայից եկող «ռուսական վտանգից»։

Ահա թե ինչու Անգլիայի կառավարիչները ուժեղացրին ոչ միայն քաղաքական ճնշումը Թուրքիայի վրա, այլև ակտիվացրին Քրիստոսի ծառաների՝ միսիոներների գործունեությունը։

Անգլիացիները մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում Փոքր Ասիայի ժողովուրդների՝ առանձնապես քրիստոնյաների և հատկապես հայերի սովորությունների, լեզվի ու կենցաղի նկատմամբ։ Չնայած անգլիական կառավարությունը պաշտոնական քայլեր չէր անում այդ հարցում, սակայն նրա գիտությամբ և նախաձեռնությամբ 1881 թ. հիմնվում է «Հին հայկական եկեղեցու բարեկարգում ներմուծող ընկերություն»[12]։ «Ընկերության» անդամներն Անգլիայում հայտնի և բարձրաստիճան անձինք էին՝ Քենթրբերիի արքեպիսկոպոսի նախագահությամբ[13]։ Այդ «Ընկերության» և նրա նպատակների մասին պետական քարտուղար Ի. Դուանովն ռուսական կայսրության ներքին գործերի մինիստրին ուղղած իր 1882 թ. հոկտեմբերի 4-ի գրությամբ տեղեկացնում է, որ «Ընկերությունը» ցանկանում է անգլիկանական եկեղեցու միջո-

---

[8] ЦГИАЛ СССР, ф. 821, оп. 125, д. 150, 152; оп. 138, д. 76, 82, 98, 170; оп. 140, д. 14. 59.

[9] Տրապիզոն—Էրզրում—Թավրիզ—Թեհրան առևտրական ճանապարհն «անգլո-հայկական ուղի է անվանել Վիկտոր Բերարը «Հեղափոխությունը Պարսկաստանում» գրքում (Victor Bérard. Revolution de le Perse. Paris. 1910. p. 175), իսկ անգլիացի աշխարհագետ Լինչը այն անվանում է «հյուսիսային առևտրական ճանապարհ», բարձր գնահատելով այդ ճանապարհի դերը Բրիտանիայի և Կենտրոնական Ասիայի միջև առևտրի զարգացման գործում (Х. Ф. Б. Линч. Указ. соч., с. 56)։

[10] Ե. Գարիկյան. Հայ ազատագրական շարժումներ. Անթիլիաս, 1976, էջ 172—179։ Ջ. Կիրակոսյան. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.). Երևան, 1980, էջ 76—158։ Լ. Բայրամյան. Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում. Երևան, 1982, էջ 158—159։

[11] История дипломатии, под ред. акад. В. И. Потемкина. Т. I, М.—Л., 1945, с. 76—106.

[12] ЦГИАЛ СССР, ф. 821, оп. 138, д. 82. л. 7, 18, 19—20, 21—31, 33, 35, 121.

[13] «Ընկերության» անդամներն էին՝ լորդ Արերդինը, լորդ Բոսթոնը, մարկիզ Բաթին, Ջիրտլթարի եպիսկոպոս Գ. Պ. Լիթթիղին Ջելը, մարշալ Թեմիլթոնը, մարշալ Ե. Ս. Բորնբին, ծովակալության կապիտան Սելֆը, պառլամենտի անդամներ Ա. Ու. Բաքսթերը, Ջեյմս Բրայսը, Ու. Ջեսսերը, Գ. Ա. Մակ-Արթուրը, Ու. Գ. Ջեյմսը, սըր Էդմոնդ Ս. Գ. Լիշմերը, աստվածաբանության դոկտորներ կանոնիկոս Ջիրթին, Ու. Դենտին, Ռ. Ֆ. Լիթթելդերը, Մալքոլմ-Մակը, Գ. Ֆ. Թոդյուրը և ուրիշներ (ЦГИАЛ СССР, ф. 821, оп. 138, д. 82, л. 29)։

ցով ուժեղացնել Մեծ Բրիտանիայի ազդեցությունը Թուրքահայերի շրջանում[14]։ «Հին հայկական եկեղեցու բարեկարգում ներմուծող ընկերության» նպատակի իրականացումը շատ երկար ժամանակ չէր պահանջի՝ այդպիսի կարծիքի էր հանգում կանոնիկոս Դրիսդրեմը Փոքր Ասիա կատարած իր ճանապարհորդության մասին գրած հաշվետվության մեջ։ Նա եզրակացնում է. «...եթե բարեկարգումը պետք է ներմուծվի հայերի միջոցով և նրանց ազգային ոգով... ապա 25 տարվա ընթացքում բարեկարգումը կտարածվի ամբողջ ժողովրդի վրա, այդպիսով, նա նորից կմիավորի բոլոր հայերին միասնական, հնադարյան բարեկարգ եկեղեցու մեջ»[15]։

Անգլիական տիրող շրջանների այս նախաձեռնությունը նախ բացատրվում է այն հանգամանքով, որ հայերը, ծանր դրության մեջ լինելով Թուրքիայում, իրենց հույսը չէին կապում ազատագրվելու օսմանյան լծից և իրենց փրկությունը կապում էին գերազանցապես Ռուսաստանի հետ, սակայն անտարբեր էլ չէին եվրոպական երկրների «օգնության» հանդեպ։ Անգլիական միսիոներական ընկերության գործունեությանը նպաստում էր թուրքական կառավարողների անտարբերությունը վիլայեթներում ապրող բնակչության նկատմամբ և իր քաղաքական նպատակները հետապնդող անգլիական մամուլի «հայանպաստ» պրոպագանդան։

«Ընկերության» առաջին պաշտոնական ներկայացուցիչը Թուրքիայում կանոնիկոս Տրիստանն էր, որն իր քարոզները կարդում էր Այնթափում[16]։ «Ընկերության» նախագահ Քենբրբերիի արքեպիսկոպոսը և Ջիբրալթարի արքեպիսկոպոսը, որին ենթարկվում էին անգլիական բողոքական բոլոր համայնքները Արևելքում, Կոստանդնուպոլսում իրենց անմիջական գործակալ նշանակեցին պաստոր Կուրտիսին։ Բացի այդ, ամեն տարի Կոստանդնուպոլիս էր այցելում «Ընկերության» ներկայացուցիչը՝ հայ եկեղեցու բարձրագույն ներկայացուցիչներից անձամբ տեղեկություններ ստանալու համար, նրանց հետ քննարկելու կրոնական հարցերը, աշխատելով համոզել հայերին համաձայնության գալ բողոքական եկեղեցիների հետ։ Միաժամանակ փորձում էին ապացուցել, որ այդ եկեղեցիների տարբերությունը հիմնականում ոչ թե դոգմաների, այլ ծիսակատարությունների մեջ է։ Սակայն բանակցությունները ոչ մի արդյունք չտվեցին[17]։

Դրանից հետո «Ընկերությունն» անցնում է մասնավոր նախաձեռնության. Փոքր Ասիայի մեծաթիվ հայ բնակչություն ունեցող մի շարք քաղաքներում հիմնում են Սուրբ Գրիգորի եկեղեցիներ. օգտագործելով Գրիգոր Լուսավորչի անունը ջանում էին դրանով իսկ ազդել հայերի կրոնական զգացմունքների վրա։ Թեև միսիոներների դիրքերը քաղաքականապես ամրապնդելու նպատակով անգլիական դեսպանատունը այդ եկեղեցիների գույքը, հողատարածությունները և գործակալներին վերցնում է իր հովանավորության տակ, այնուամենայնիվ հայերին հեռու չվանելու համար «Ընկերությունն» աշխատում էր ձեռք բերել էջմիածնի կաթողիկոսարանի դաշնակցությունը։ Ամենայն հավանականությամբ 1883 թ. Քենթրբերիի արքեպիսկոպոսի կարգադրությամբ Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Ադգլլոն Ռայլյայը, որպես արքեպիսկոպոսի պատվիրակ, գալիս է Արևմտյան Հայաստան ոչ միայն ծանոթանալու «քրդերի և պարսիկների մեջ ապրող քրիստոնյաներին, նրանց դրությանը, կարիքներին», այլև նպատակ ունենալով այցելել էջմիածնի կաթողիկոսին՝ արքեպիսկոպոսի նամակը նրան հանձնելու համար։ Նամակ-ուղերձում խոսելով հայ եկեղեցու մասին՝ Քենթրբերիի արքեպիսկոպոսը վերջում ցանկություն է հայտնում, որպեսզի քրիստոնեական բոլոր եկեղեցիները «...միմյանց շաղկապված լինեն միասնության ու սիրո հանգույցներով և կատարելագործված լինեն հավատով», իսկ «Ընկերության» նպատակն է «հայկական եկեղեցում հայերի ազգային բարեկարգում ներմուծել, կրկին համախմբել նրանց (հայերին—Ա. Ս.) միասնական հնադարյան եկեղեցիով...»։ Քենթրբերիի արքեպիսկոպոսի պատվիրակին պատասխան-նամակ է

---

14 ЦГИАЛ СССР, ф. 821, оп. 138, д. 82, л. 18, 19—20. Դեռևս 1866 թ. ռուսական ներկայացուցչի հետ զրույցի ժամանակ Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր Վիլյամսը, պատմելով իր տպավորությունների մասին Թուրքիայի արևելյան վիլայեթներ կատարած ճանապարհորդությունից, նշում է, որ երազում է «...անգլիական եկեղեցու հաղորդակցությունը արևելյան եկեղեցիներից մեկի հետ» (ЦГИАЛ СССР, ф. 821, оп. 138, д. 82, л. 13—14)։

15 ЦГИАЛ СССР, ф. 821, оп. 138, д. 82, л. 17, д. 170, л. 27.

16 ЦГИАЛ СССР, ф. 821. оп. 138, д. 82, л. 27.

17 Նույն տեղում, թ. 33։

հանձնում էջմիածնի արքեպիսկոպոսը[18], շնորհակալություն հայտնելով անգլիկանական եկեղեցիների առաջնորդին հայերի նկատմամբ այդպիսի ուշադրության համար և քաղաքավարությամբ մերժում Ռայլյայի առաջարկը։ Էջմիածնում իր առաքելությունը ավարտելով, պրոֆ. Ռայլյայը այցելում է Թուրքիայի և Պարսկաստանի հայաշատ վայրերը։ Նա փորձում է տեղի հայությանը համոզել, որ հայկական և անգլիկանական եկեղեցիների միջև ոչ մի տարբերություն չկա։ Եվ, ինչպես մյուս անգլիական միսիոներները, ձգտում է ապացուցել անգլիկանական եկեղեցու առավելությունը հայ լուսավորչական եկեղեցու նկատմամբ, քանի որ վերջինս, պատկանելով հզոր պետության, կարող է իր օգնությունը և հովանավորությունը ցույց տալ բոլոր այն նշված ժողովուրդներին, որոնք ընդունում են անգլիկանական եկեղեցին։ Սակայն Ռայլյայի խանդավառ հորդորները ոգևորությամբ չընդունվեցին հայերի կողմից[19]։

«Հին հայկական եկեղեցու բարեկարգում ներմուծող ընկերությունը» շարունակեց ակտիվացնել իր գործունեությունը. ինչպես իրենց ամերիկյան գործընկերները, հայ երիտասարդությանը բողոքական ոգով դաստիարակելու համար հայկական բնակավայրերում դպրոցներ բացեցին[20]։ Անգլիայից դրամական միջոցներ ստանալով[21], իրենց բացած դպրոցներում նրանք աշխատում էին ուսման վարձը նվազեցնել կամ, ընդհանրապես այն վերացնելով, չքավոր հայ ընտանիքներին հնարավորություն էին տալիս երեխաներին ուղարկել միսիոներական դպրոց։ Միաժամանակ, կանգ չառնելով ոչ մի միջոցի առաջ, նրանք փորձում էին ամեն հընարավոր դեպքում տպավորություն գործել տեղի ժողովրդի վրա։ Հատկանշական է, որ անգլիական միսիոներները, և ոչ միայն անգլիական, աշխատում էին եկեղեցական ամեն մի ծիսակատարություն անցկացնել մեծ շուքով, նույնիսկ չքահանդեսներին ընդգրկելով ոչ միայն քրիստոնյաներին, այլև մահմեդականներին[22]։

Սակայն անգլիական միսիոներների այդ ջանասիրությանը հայերը այնքան էլ ուշադրություն չէին դարձնում[23], թեպետ միսիոներներին պաշտպան էր կանգնել անգլիական մամուլը, որը մեղադրում էր Ռուսաստանին հակահայկական գործունեության մեջ[24]։ Եվ ինչպես գրում են 1882 թ. դեկտեմբերի 6-ին ռուսական դեսպանատնից արտաքին գործերի մինիստրությանը ուղղված զեկուցագրում, «ընդհանուր առմամբ անգլիական բողոքական պրոպագանդան հայերի շրջանում, հավասարապես և նման կարգի բոլոր միջոցառումները, միայն այն աստիճանի հաջողություն ունեն, որքանով որ իրենց կրոնից հրաժարվող բնակիչները հույս են տածում ձեռք բերել որևէ նյութական կամ քաղաքական օգուտներ։ Հայերը լավ են հասկանում, շարունակվում է զեկուցագրում, որ «անգլիական կառավարությունը էական համակրանք չի տածում նրանց (հայերի—Ա. Ս.) նկատմամբ և միայն միջոցներ է փնտրում նրանց միջոցով միջամտել Ասիական Թուրքիայի ներքին գործերին և, առանձնապես, նրանց հակադրել մեզ (Ռուսաստանին—Ա. Ս.)»[25]։

---

18 Էջմիածնի կաթողիկոսական աթոռը այդ ժամանակ թափուր էր, նոր կաթողիկոսը ընտրվեց 1885 թ. հուլիսին (Լևոն Զորմիսյան. Համապատկեր տրեմասահայոց մեկ գարու պատմության, Բ, 1878—1908. Պեյրութ, 1974, էջ 45)։

19 ЦГИАЛ СССР, ф. 821, оп. 138, д. 170, л. 25—36.

20 Թուրքիայի հայաշատ վայրերում դպրոցներ էր բացում ամերիկյան միսիոներական «Արտաքին առաքելությունների հանձնաժողովների Ամերիկյան խորհրդի ընկերությունը» (ЦГИАЛ СССР. ф. 821, оп. 138, д. 82, л. 21, 31; Ա. Ալպոյաճյան. Նշվ. աշխ., էջ 843։ Е. И. Шпилькова. Империалистическая политика США в отношении Турции (1914—1920 гг.). М., 1960, с. 26—29).

21 ЦГИАЛ СССР, ф. 821, оп. 138, д. 82, л. 34.

22 Տրապիզոնի ռուսական հյուպատոսը իր 1882 թ. հոկտեմբերի 25-ի զեկուցագրում նշում է այդպիսի մի փաստ։ Նա գրում է, որ միսիոներների կազմակերպած եկեղեցական շքերթի ելած ծաղկազարդ աշակերտների խմբի առջևից խաչը տանում էր Տրապիզոն աքսորված սուլթան Մուրադի թիկնապահ Ջելալ-բեյի աղջիկը (ЦГИАЛ СССР, ф. 821, оп. 138, д. 98. л. 148—156)։

23 Ընդհանուր առմամբ վերցված հայ բողոքականների թիվը չէր անցնում 20000-ից (ЦГИАЛ СССР, ф. 821, оп. 138, д. 98. л. 148—156)։

24 Այդ ուղղությամբ մեծ աղմուկ էին բարձրացնում Կոստանդնուպոլսում հրատարակվող „Extern Express" և Լոնդոնի „Daily News" թերթերը։ Նրանք ընկերությանը կոչ էին անում փրկել հայերին ռուսաստանի ոտնահարումից (Daily News, London, p. 22. 04. 1885).

25 ЦГИАЛ СССР. ф. 821, оп. 138, д. 82, л. 34—35.

1882 թ. հոկտեմբերի 19-ին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությունը Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանատանը հրահանգեց իր գործակալների միջոցով տեղեկություններ հավաքել հայկական շրջաններում միսիոներների գործունեության մասին։ Նույնատիպ հրահանգ ստացան նաև Պարսկաստանի ռուսական ներկայացուցիչները[26]։ Ռուսական կառավարությունը միջոցներ էր ձեռք առնում թուլացնելու օտարազգի միսիոներների դիրքերը ոչ միայն Թուրքահայության, այլև ռուսահայության միջավայրում[27]։

Դեռևս 1866 թ. ներքին գործերի մինիստրության հոգևոր գործերի դեպարտամենտից արտաքին գործերի մինիստրությանը ուղղված գրությունում նշված էր, որ «...բողոքական հայկական համայնքի երևան գալը Կովկասում կարող է վերածվել քաղաքական զենքի մեր արևմտյան թշնամիների ձեռքում...»[28]։ Այդ մասին է ահազանգում նաև «Санкт-Петербургские ведомости» թերթը իր 1882 թ. սեպտեմբերի 17-ի համարում։ Անդրադառնալով անգլիական միսիոներների հակառուսական քարոզներին, թերթը գրում է, որ «այդ պրոպագանդան Արևելքում ուղղակի մեր (Ռուսաստանի—Ա. Ս.) շահերի դեմ է ուղղված»։ Թերթը ռուսական կառավարությունից պահանջում է ետ մղել անգլիական հոգևորականներին և կապիտալիստներին, որոնք ձգտում են Հնդկաստան տանող առևտրական ճանապարհը, ինչպես նաև Պարսկաստանը գցել իրենց ազդեցության տակ. միաժամանակ թերթը կոչ է անում սերտորեն համագործակցել արևմտահայերի հետ, ամրապնդել ռուսական ազդեցությունը այդ շրջաններում[29]։

Հիմք ընդունելով անգլիական (և ոչ միայն անգլիական) միսիոներների հակառուսական դիրքերը՝ Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանը արտաքին գործերի մինիստրությանը ուղարկած իր 1882 թ. նոյեմբերի 4 (16)-ի գրությունում[30] նշում է Տրապիզոնի հյուպատոսի առաջարկած գործողության միջոցները՝ հայաշատ վայրերում միսիոներների դիրքերը թուլացնելու համար։ Դրանք են. 1) Փոքր Ասիայում գործող ռուսական գործակալները պետք է ամեն կերպ հայերի միջավայրում ուժեղացնեն այն գաղափարի տարածումը, ըստ որի առանց Ռուսաստանի նրանք չեն կարող փրկվել թուրքական լծից. 2) ուժեղացնել էջմիածնի կաթողիկոսի ազդեցությունը Անատոլիայի և թուրքահայ այլ շրջաններում. 3) թուրքահայ երիտասարդներին հնարավորություն տալ սովորելու Կովկասի ուսումնական հաստատություններում. 4) ռուսական հյուպատոսները տարին մեկ կամ երկու անգամ պետք է այցելեն կաթողիկոսին էջմիածնում՝ դրանով իսկ նպաստեն հայկական երկփեղկված շրջանների միավորմանը, թուլացնելով միսիոներների պրոպագանդան հայերի շրջանում. 5) պետք է նյութապես օգնել հայկական դպրոցներին[31]. 6) Ռուսաստանից ուսուցիչներ ուղարկել և ռուսերեն լեզուն դասավանդել տեղի հայկական դպրոցներում, իսկ ռուսաց լեզվին տիրապետելը թուրքահայ երիտասարդներին հնարավորություն կտա իրենց ուսումը շարունակել Ռուսաստանում և ոչ թե եվրոպական ուրիշ երկրներում։ Այս բոլոր միջոցառումները իրավունք կտան ռուսական հյուպատոսներին միջամտելու իրենց շրջաններում գտնվող հայկական դպրոցների գործերին։

Այնուհետև Տրապիզոնի հյուպատոս Բելոցերկովսկին եզրակացնում է, որ այս միջոցառումների իրականացումը էլ ավելի կամրապնդի ոչ միայն կուլտուրական կապերը, այլև կընդարգացնի առևտրատնտեսական հարաբերությունները արևմտահայության և Ռուսաստանի միջև[32]։

Հետագայում Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանին միևնույն բովանդակությամբ զեկուցագիր է ուղարկում Էրզրումի ռուսական հյուպատոսը։ 1886 թ. դեկտեմբերի 26-ի զե-

---

26 ЦГИАЛ СССР, ф. 821, оп. 138, д. 82, л. 35, 121.

27 Նույն տեղում, ց. 125, գ. 152-1, թ. 29; ց. 138, գ. 82, 79—84։

28 Նույն տեղում, ց. 140, գ. 59, թ. 84։

29 «Մշակ» թերթը քննադատում է «Санкт-Петербургские ведомости»-ի այս հոդվածը, հոդվածագրին մեղադրելով հայ իրականությանը անիրազեկ լինելու մեջ։ Հոդվածագիրը, ըստ «Մշակի» խառնել է հայ բողոքականությունը անգլիկանական եկեղեցուն, այն դեպքում, երբ «Հին հայկական եկեղեցու բարեկարգում ներմուծող ընկերությունը», Ջեյմս Բրայսի խոսքերով ասած, ցանկանում է «ամիսայն բարեփոխել հայոց եկեղեցին և ոչ թե անգլիացնել հայերին» («Մշակ», 20 սեպտեմբերի 1882)։

30 ЦГИАЛ СССР, ф. 821, оп. 138, д. 98, л. 147.

31 Տրապիզոնի ռուսական հյուպատոսի հաշվարկներով միայն Տրապիզոնի հայկական դպրոցներին տարեկան բավական էր 1000 ռուբլի վարկ տալ։

32 ЦГИАЛ СССР, ф. 821, оп. 138, д. 98. л. 151—156.

կուցագրում նշվում է անգլո-ամերիկյան միսիոներների ծավալած ակտիվ գործունեության մասին Էրզրումի շրջանում[33], որտեղ Մեծ Բրիտանիայի կառավարությունը բողոքական համայնքների միջոցով ցանկանում է անցկացնել իր քաղաքական մեքենայությունները...[34], ամենն կերպ հովանավորելով տեղի բողոքական համայնքներին։ Սակայն, ինչպես գրում է հյուպատոսը, հայերի համայնքը Ռուսաստանի կողմն է։ Եվ որպեսզի հայերը չհեռանան ռուսական կողմնորոշումից, նա առաջարկում է միջոցներ տրամադրել տեղի հայկական դպրոցներին, որով հնարավորություն կտան, որպեսզի «դրանք (հայկական դպրոցները—Ա. Ս.) կարողանան հաջողությամբ պայքարել անգլո-ամերիկյանի հետ և, վերջապես, կամրապնդվի մեր նկատմամբ հայ-լուսավորչական ժողովրդի համակրանքը փոքրասիական կարևորագույն կենտրոններից մեկում»։ Միաժամանակ առաջարկվում է ուժեղացնել էջմիածնի ազդեցությունը[35]։

Էրզրումի հյուպատոսն իր զեկուցագրում խնդրում է Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանին այդ հարցով դիմել կառավարությանը[36]։ Ռուսական կառավարությունը վճռում է որոշակի գումար ուղարկել այդպիսի հարցերը կարգավորելու համար[37]։ Բացի այս ամենից, Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանատունը իր հերթին վստահեցնում է կառավարությանը, որ հայերը ընդդիմանում են կրոնական այդ տարբեր հոսանքներին և «ընդհանրապես նրանց (հայերի—Ա. Ս.) շրջանում միշտ պահպանվում է հավատի զգացմունքը մեր (Ռուսաստանի—Ա. Ս.) նկատմամբ»։ «Մեզ մնում է... նրանց աջակցություն ցույց տալ, նրանց օգնությամբ իրագործել մեր քաղաքական հեռանկարները, ուր կարող են տեղ գտնել հայերի և՛ նվիրական երազները, և՛ հույսերը»[38]։ Այնուհետև դեսպանատունը հավաստիացնում է իր կառավարությանը, որ ռուսական կայսրությանը հակադիր կանգնած օտարերկրյա (մասնավորապես անգլիական) միսիոներական ընկերությունների շանքերը՝ ձերբազատելու և օտարելու Փոքր Ասիայի հայ բնակչությանը ռուսական կողմնորոշումից, որոշակի արդյունքի չհասան[39]։

1880-ական թթ. կեսերին անգլիական միսիոներների ակտիվությունը աստիճանաբար սկսեց թուլանալ՝ հանդիպելով հայերի վճռականությանը իրենց կրոնի պահպանման հարցում։

Ընդհանուր առմամբ անգլիական խաչակիր «մարդասերների»[40] փորձը իրենց կրոնական ցանցապատյանը նետել հայերին, դարձնելով նրանց անգլիական քաղաքականության շահերի կամակատարները Փոքր Ասիայում, ձախողվեց։

Ա. Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

---

33 Հատկապես նշում է Խարբերդ քաղաքը, որը դարձել է միսիոներների համար «իրենց լուսավորական հերոսություններ» վայրը (ЦГИАЛ СССР, ф. 821, оп. 140, д. 14, ч. III, л. 79)։

34 ЦГИАЛ СССР, ф. 821. оп. 140, д. 14, ч. III, л. 83.

35 Նույն տեղում, թ. 79, 81, 85—86։

36 ЦГИАЛ СССР, ф. 821, оп. 140. д. 14, ч. III, л. 76—78.

37 Նույն տեղում, թ. 87։

38 Նույն տեղում, ց. 138, դ. 82, թ. 34։

39 Նույն տեղում, թ. 35—36։

40 «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1882, № 129—131։ Միսիոներներին «մարդասերներ» է անվանել Սպանդարյանը «Մեղու Հայաստանի» թերթի վերոհիշյալ համարներում տպված իր առաջնորդող հոդվածներում։